# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 սեպտեմբերի 2020թվականի N 82

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 25-ի N11 հերթական նիստի օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը քաղաքացու սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ փոխանակելու մասին
2. Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու եվ մեկնարկային գինը հաստատելու մասին
3. Նոր Գեղի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 31-ի N 9 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 7 Դեմ - Ձեռնպահ -

Սամվել Ալեքսանյան ____________

Արմեն Բաբախանյան ____________

Վահագ Գևորգյան ____________

Գագիկ Գևորգյան ____________

Վլադիկ Գրիգորյան ____________

Մանյա Կիրակոսյան ____________

Շիրալի Մամոյան ____________

Մարիա Մկրտչյան ____________

Նաթելա Շմավոնյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 սեպտեմբերի 2020թվականի N 83

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի 286-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ գլխի 29-րդ կետի պահանջներով՝

1. Նոր Գեղի համայնքային սեփականություն հանդիսացող 07-048-0065-0210 կադաստրային համարի 0,00264 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը փոխանակել Գագիկ Ղազարի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0065-0180 կադաստրային համարի բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0,00264 հա մակերեսով հողամասի հետ, որպեսզի ընդլայնվի Նոր Գեղի համայնք Ուսանողական փողոց թիվ 8 շենքի սպասարկման տարածքը:

2. Սույն որոշումն ուժի մտնում Գագիկ Ղազարի Կիրակոսյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ 7 Դեմ - Ձեռնպահ -

Սամվել Ալեքսանյան

Արմեն Բաբախանյան

Վահագ Գևորգյան

Գագիկ Գևորգյան

Վլադիկ Գրիգորյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մարիա Մկրտչյան

Նարեկ Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
25 սեպտեմբերի 2020թվականի N 84

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթների, Նոր Գեղի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Համաձայնություն տալ Նոր Գեղի համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով հետևյալ հողատեսքերը օտարելու համար՝

1.1 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող 07-048-0451-0061 կադաստրային ծածկագրով 0.150414 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի՝

մեկնարկային գինը սահմանել 4512420 (չորս միլիոն հինգ հարյուր տասներկու հազար չորս) դրամ, մեկ քայլի չափը 225621/ երկու հարյուրքսանհինգ հազար վեց հարյուր քսանմեկ / դրամ:

1.2 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող 07-048-0458-0005 կադաստրային ծածկագրով 0.49 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք՝

մեկնարկային գինը սահմանել 2352000 (երկու միլիոն երեք հարյու հիսուն երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը 117600/ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր / դրամ:

2.Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ 7 Դեմ - Ձեռնպահ -

Սամվել Ալեքսանյան
Արմեն Բաբախանյան
Վահագ Գևորգյան
Գագիկ Գևորգյան
Վլադիկ Գրիգորյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Մարիա Մկրտչյան
Ներսես Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2020թվականի N 85

### ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 9 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Նոր Գեղի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 31-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը քաղաքացի Մանյակ Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ փոխանակելու մասին>> N15 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանյակ Բաբայանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ 7 Դեմ - Ձեռնպահ -

Սամվել Ալեքսանյան

Արմեն Բաբախանյան

Վահագ Գևորգյան

Գագիկ Գևորգյան

Վլադիկ Գրիգորյան —

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մարիա Մկրտչյան —

Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ